Ուսուցիչ՝ Ալինա Սահակյան
Ամսաթիվը՝ 04.11.2015 թ.
Առարկան՝ մայրենի
Դասարանը՝ 1-ին
Դասի թեման՝ Ա հնչյուն-տառի ուսուցում
Դասի բնույթը՝ նոր նյութի հաղորդման դաս
Դասի նպատակը՝

- Ամրապնդել պատմության, նախադասության, բառի, վանկի, ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին ունեցած գիտելիքները:
- Զարգացնել բանավոր խոսք կառուցելու,վերլուծելու,համադրելու կարողությունները:
- Զարգացնել բառակազմական ունակությունները, բառերը հնչյունային վերլուծության ենթարկելու, դրանց գծապատկերները կառուցել կարողությունները:
- Ա հնչյուն-տառի տեղի որոշում բառում:
- □) □հնչյունի արտասանության և տառի գրության ուսուցում:

Անհրաժեշտ պարագաներ՝ համակարգիչ, պրոյեկտոր, կոմպոզիցիա «Աշնանային անտառ», կենդանիների,թռչունների նկարներ,մեծադիր տառեր, պաստառներ, քարտեր, ածուխ,նուշ:

Ընթացքը

Խթանում

ՈՒսուցիչ-

ԱՔԱՂԱՂԸ Է ՁԻԼ ԿԱՆՉՈՒՄ,
Ա-Ի ԾՆՈՒՆԴԸ ԱՎԵՏՈՒՄ,
ԲԱՐԻ ԼՈՒՐԸ ԵՆՔ ԱՅԴ ՀԱՅՏՆՈՒՄ,
ՈՒ ԲԱՑ ԴԱՍԻՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ:

- Սիրելի՛ երեխաներ, ձեր կարծիքով ինչո՞ւ է մեր դասարանը այսօր զարդարված: Գիտե՞ք դասարանը տոնական տեսք է ստացել, քանի որ այսօր մենք նշելու ենք այբուբենի առաջին տառի ծնունդը:Իսկ դուք գիտե՞ք, թե ով է ստեղծել հայոց այբուբենը և ո՞րն է առաջին տառը: Մեզ հյուր է եկել Մեսրոպ Մաշտոցը: Նա էլ կպատմի գրերի գյուտի մասին: Ներս հրավիրենք նրան:

Մաշտոց

- Բարև՛ ձեզ, սիրելի՛ երեխաներ: Հիմա կպատմեմ այբուբենի ստեղծման պատմությունը.

« 387 թվականին, երբ Հայաստանը բաժանվեց 2 մասի, մենք՝ հայերս, հայտնվեցինք շատ ծանր վիճակում: Այս դեպքում զենքը ոչնչով չէր կարող օգնել, անհրաժեշտ էր գիր, տառեր: Զգացի, որ թշնամու դեմ պայքարելու միակ միջոցը գիրն է: ՈՒ որոշեցի ստեղծել այբուբեն: Սկզբում դա շատ հեշտ էր թվում,սակայն, երբ լծվեցի գործի , բազմաթիվ խոչընդոտների հանդիպեցի: Ես, օգնականներիս հետ, մեկնեցի տարբեր երկրներ, ուսումնասիրեցինք այդ երկրների գրերը: Առանձնացրեցինք հնչյունները,որոշեցինք դրանց տեղերը: Առաջին հնչյունը

«Ա»-ն էր:Մտածում էի. « Հնչյունը կա,բայց այն միայն արտասանում ենք ու լսում, իսկ տա՞ռը, ի՞նչ տեսք պետք է ունենա այն»: ԵՎ այդ պահին…

Ներս է մտնում արծիվը:

Արծիվ

Արծիվն եմ ես զորավոր
Թռչունների թագավոր,
Թե թևերս տարածեմ
Տառի ես կնմանվեմ:
Հենց այս տեսքով պատկերիք
Առաջին տառն այբուբենի:

Մաշտոց

-Իհարկե՛, հենց այդ տեսքով էլ կպատկերեմ:

Ներս է մտնում «Ա» տառը:

«Ա»

Ես այբուբենի
Առաջին տառն եմ,
Բոլոր տառերի
Առաջատարն եմ:
Անդրանիկ զինվորն
Անդրանիկ հույսն եմ,
Մեսրոպյան մտքի
Առաջին լույսն եմ:
Ես միշտ առաջին
Պայծառ երազն եմ,
Ես ձեր բոլորի
Առաջին դասն եմ:

Արծիվ

Ա-ն մեր վեհ Արարատն է և արևն է,
Որ թիկնել է Արարատի հպարտ ուսին:
Արարատն էլ մեր արմատն է,
Թեկուզ նրան փորձեն խեղդել դրոշներով կիսալուսնի:

Մաշտոց

Մեծ դժվարությամբ գրեցի նաև մյուս տառերը: ԵՎ 405 թվականին, երբ բոլոր հնչյուններն ունեցան նշաններ՝ տառեր, մենք վերադարձանք Հայաստան: Մայրաքաղաք Վաղարշապատում (Էջմիածնում) մեզ մեծ շուքով դիմավորեցին:Ես զգացի կատարածս գործի կարևորությունը և ինձ վարձատրված զգացի՝ նման վերաբերմունքի արժանանալով:

Ձեզ եմ նվիրում հայոց այբուբենը և հուսով եմ,որ լավ կսովորեք ու կտիրապետեք հայոց լեզվին»:

ՈՒսուցիչ-

- Սիրելի՛ Մաշտոց, շնորհակալություն նման վեհ գործ կատարելու համար:Այժմ հետևեք մեր դասին և հետևություններ արեք Ձեր հետնորդների ընդունակությունների մասին: Իսկ դուք, սիրելի՛ երեխաներ, ձեր ակտիվ մասնակցությամբ ապացուցեք,թե որքան խելացի եք: «Աշնանային անտառ» կոմպոզիցիայի բովանդակության վերարտադրում՝ կրկնելով պատմություն- նախադասություն- բառ- վանկ- հնչյուն շղթան:

Նախադասությունների առանձնացում(Արծիվը սավառնում է երկնքում: Արջը մեղր է ուտում: Աղվեսը թաքնվել է ծառի հետևում:) Գծապատկերների կառուցում:





Նախադասություններից բառերի (արծիվ, աղվես, արջ) առանձնացում, դրանց գծապատկերների կառուցում, ձայնավոր հնչյունների տեղերի որոշում:



Աշխուժացնող վարժություն. «Օդում, ջրում, ցամաքում»:

Իմաստի ընկալում

Հանելուկների տարակից հանել անակնկալ- հանելուկը:

Ունեմ երկու տառ,
Կազմում եմ մի բառ,
Եթե ես չկամ,
Ձեր ճաշն է անհամ:
(աղ)

Աղ բառը ենթարկել հնչյունային վերլուծության: Որոշել Ա հնչյունի տեղը, ձայնավոր է այն, թե բաղաձայն: Ցուցադրել տպագիր Ա, ա տառերը, պարզել,թե երեխաները գիտեն ինչու են

տարբեր դրանք, մեծատառը երբ է գործածվում: Ապա ցուցադրել ձեռագիր □ □ տառերը: Բացահայտել , թե որոնք են ձեռագիր, որոնք տպագիր տառերը:

Երգ «Ա տառի երգը»:

Աշխատանք դասագրքի 44 էջի առաջադրանքների շուրջ.

★ Թեմատիկ նկարի բովանդակության վերարտադրում:

★ Նախադասությունների առանձնացում:

★ Բառերի առանձնացում:

Աշխուժացնող վարժություն. «Այգի»:

ՈՒսուցիչ- Այժմ ծանոթանանք հրաշագործ Ա տառին:Սահիկների ցուցադրում:





Կշռադատում

★ Նշված բառերում որոշել Ա հնչյունի տեղը:

★ Թելերով ստանալ □ □ տառը:

★Քարտերում պատկերված առարկաների գծապատկերներում Ա տառի տեղի որոշում (գծապատկերում նշել կանաչ գույով), պատկերների գունավորում: